ԲՈՅԱՆԵՐԸ

Ըստ ԱԴՐԻԱՆՕ ԿՈԼՈԶԻՍ'ի

I

Բոյանների ծագումը և զարգացումը պատկանում է այն բազմաթիւ էթնոգրաֆիական և սոցիոլոգիական խնդիրներին, որ նորագոյն գիտութիւնը դեռ ևս բաւարար կերպով չի լուծած։

Կարելի է համարձակ ասել, որ բոյա լինելու համար պէտք է բոյա ծնուել, որովհետև չի կարելի բոյա դառնալ։ Արեան ազնուութիւնը, որի չնորհիւ նոքա միւս ազգերին ոչ մաքուր կամ հառամ են համարում, այս հանգամանքը, որ նոքա բոլորովին չունին հակումն՝ հետևողներ գտնել, կետոյ այն, որ նոքա, ինչ դրութեան մէջ էլ որ են՝ ստրուկ, թէ տէր, անազատ թէ ազատ, լուսաւորուած թէ ոչ լուսաւորուած՝ նոքա միշտ շարունակում են իրանց զուտ անհատական կեանքը, գուցէ գնահատում են լուսաւորութիւնը, բայց այդ կողմից ամենևին զուրկ նախանձի զգացմունքից, մեծ մասամբ թափառող և յաճախ անօթութեան դէմ կուռող, և եթէ ոչ իսկապէս բաղդաւոր, գտնէ ազատ և նոյնքան համարձակ և արհամարող կեանքի անպատեհութիւնները, որքան ուրախ բաղդաւորութեան մէջ,—ահա բոյաների ընդհանուր գծագրութիւնը։

Բայց այդ կաստային հպարտութիւնը չէ միայն, ինչ մեր ուշքն է գրաւում։ Դորանից շատ աւելի հետաքրքրում են մեզ կեանքը և պատմական վիճակը այս տարօրինակ և ամենուրեք թափառող ժողովրդի, որը փոփոխակի երբեմն ախուր, երբեմն ուրախ է տրամադրում, երբեմն վախեցնում է և խղճալ է տալիս, երբեմն ծիծաղ յարուցանում։

Ահա ինչով պէտք է մեկնել և այն, որ, նայած գրողի բնաւորութեան, շատ մարդիկ զբաղուել են մարդկային այդ ցեցով, տալով երբեմն ընդարձակ ուսումնասիրութիւններ բոյաների ժողովրդական կեանքի մասին, սկսած նոցա ծագումից մինչ նոցա ներկայ դրութիւնը, իսկ երբեմն սահմանափակել իրանց ուսումնասիրութիւնը կեանքի՝ լոկ մի քանի կող-

մերով, որպէս են նոցա երաժշտութիւնը, երգեցողութիւնը, պարը և այլն։

Թէ որքան մեծ է գրականութիւնը բոշաների մասին, այդ երևում է արդէն Գուիդա Կորա-Տուրին'ի վկայութիւնից, որը, իւր մի լօգուածում բոշաների մասին, հրատարակուած «Դաս Աուսլանդ» (Das Ausland—«Արտասահման») երկրաբանական և ժողովրդաբանական շաբաթաթերթի այս տարուայ 31, 32, 33, 34 և 36 համարներում, վկայում է, թէ բոշաների մասին ինքնուրոյն ուսումնասիրութիւնների թիւը հասնում է 500 հատի, իսկ մանրերի հետ միասին մինչ 1000-ի։ Եւ չը նայած դորան, դեռ այդ ազգը կամ ցեղը լիակատար կերպով ուսումնասիրուած չէր մինչ վերջին տարին, երբ լոյս տեսաւ Ադրիանո Կոլոչիս'ի դիրքը՝ «Բոշաները։ Մի թափառող ազգի պատմութիւն» [1]), որը թէ եղած պակասութիւններից շատերը լրացրեց և թէ միւսների վերայ մատնանիշ եղաւ։ Այսպիսի մի գործ գրելու համար հեղինակը մեծամեծ պատրաստութիւններ ունէր, անձամբ ծանօթ լինելով թէ Արևելքի և թէ Արևմուտքի բոշաների հետ և ունենալով գրեթէ լիակատար տեղեկութիւն բոշաների մասին գրած թէ հին և թէ նոր գրականութեան մասին։ Իւր թարմ գրած և գիտնականօրէն մտածուած գրքով Կոլոչիս յաջողութեամբ մի խնդիր է ուսումնասիրում, որի մասին Իտալիայի գիտնական գրականութիւնը ունէր Ֆրանչիսկո Պրիդարիա'ի գիրքը [2]) դեռ ևս կէս դար մեզնից առաջ, որը անկասկած նպաստեց նիւթի աւելի խորը և ընդարձակ ուսումնասիրութեան։ Հետևելում մենք կը հիմնուենք գլխաւորպէս վերոյիշեալ Կոլոչի'ի բացատրութիւնների վերայ, հետևելով Կորա-Տուրինի լօգուածին և սկսելով բոշաների ծագման խնդրից։

II

Բոշաների ծագումը։

Բոշաների ծագման խնդիրը պատմաբանների և էթնօլոգների լուսահատ խնդիրներից մէկն է։ Հները նոցա ծագման մասին ոչինչ չեն խօսում և ոչ էլ նոցա ցրելու պատճառների մասին։ Ներկայիս քննադատութիւնը և համեմատական լեզուագիտութեան այնքան արդիւնաւոր հետևանքները նմանապէս չ'առաջացրին մի հաստատ պատասխան այդ մասին։ Այդ պատ-

---

[1]) Adriano Colocci, Gli Zingari, Storia d'un popolo errante. Turin 1880. 8°—430 երես, մի քարտէզով և բազմաթիւ նկարներով։ Գիրքը նուիրած է Նորին Կայս. և Թագ. բարձրութիւն արքիդուքս Յովսէփին, որը իւր ուսումնասիրութեան առարկայ է չինել Ունգարիայի բոշաներին և սոցա մասին թէ արտաքուստ և թէ բոլանդակութիւնով հաւասարապէս չքեղ գիրք է հրատարակել։

[2]) Francesco Predari, Origine e vicende degli Zingari. Միլան, 1841 թ., 288 երես, նկարներով։

ճառով էլ անա երեք դարից ի վեր ամենազանազան և յաճախ ամենանամիտ կարծիքներ են յայտնուել բոշաների ծագման մասին։ Ամենից առաջ աչքի են ընկել այն անունները, որ կրում են բոշաները՝ բոմ, սինտի, ցիգան, ջիտանոս, բոհեմիեն, չինգիանէ, բոշա և այլն։

Զը խօսելով նոցա մասին, որոնք բոշաներին միֆոլոգիական ծագումն են յատկացնում, վիշենք այստեղ Բատայլար'ին [1]), որը քառասուն տարիներից ի վեր պնդում է, թէ սկսած բրոնզի դարեշրջանից՝ բոշաները կենալիս են եղել Եւրոպայի հարաւ-արեւելեան մասում, Փոքր-Ասիայում և հիւսիսային Աֆրիկայի մի քանի մասերում, ուր նոքա խառնուում էին միւս ցեղերի հետ։ Բայց Բատայլար'ի այս հայեացքը հաւատ չի գտնում նոյն իսկ Ֆրանսիայում։

Աւելի տարածուած են այն հետազօտողների կարծիքները, որոնք պատմական փաստերի մէջ են մնում։ Հերոդոտի և Ստրաբօի այն տողերը, որոնք վերաբերում են սիգինացիներին (Sigynnai), հիմք ծառայեցին մի քանիսներին (որպէս նաև Բատայլարին), թէ բոշաները ծնունդ են առնում Կովկասեան երկիրներից, փոքր Ասիայից և Թրակիայից։ Բայց մնծամասնաբար հետազօտողները կանգ առան ֆիլոլոգիական և լեզուաբանական համեմատութիւնների վերայ և գտան որ բոշաները ցեղակից են հնդկական Սինթ ցեղի հետ։ Այս կարծիքի պաշտպաններից մանաւանդ պէտք է վիշել անգլիացի ճանապարհորդ կապիտան Բիւրտոն'ին [2])։ Բայց գիտական տեսակէտից կշիռ ունին մանաւանդ Գօլէ, Հելանդ, Միկլոշիչ և Ասկոլի, որոնք հաստատում են բոշաների լեզուի ազգակցութիւնը նորարիական լեզուների հետ։

Այս բոլոր հետազօտութիւնների հիման վերայ՝ Կոլոչին գալիս է այս եզրակացութեան, թէ բոշաները ծագում են Հնդկաստանից և որ այստեղից նոքա իրանց գաղթը երկու ճանապարհով են կատարել, որոնցից մէկը ծովափնեայ է, միւսը՝ ցամաքով։ Երբ նոքա անցել են Հնդոս գետը, որը բոլոր արիական գաղթականութիւնների գլխաւոր երակն է եղել, ծովափնեայ ճանապարհը ուղղուել է դէպի Բելուջիստանի ծովափը, դէպի Պարսից ծոցը, Արաբիայի ափերը, Կարմիր ծովը, Սիրիայի եղերքը և Արխիպելագոսի կամ Եգեյեան ծովի կղզիները։ Այդ ճիւղին են պատկանում բոշաները Նուբիայի և Եգիպտոսի, Բիգարի, Էլեբիի և Մուրի, յետոյ Կրետայի Կախմ-բոշաները և Սիրիայի Կուրբատները։ Ցամաքով գաղթածները պէտք է անցած լինեն Պարսկաստանը, Միջագետքը և Փոքր-Ասիան և գարձած լինեն դէպի Կասպից ու Սև ծովերը, ուր նոցա մի մասը հան-

---

[1]) Paul Bataillard.—Les Tsiganes de l'âge de bronze. Paris 1876 և նորա բազմաթիւ այլ գրուածքները։

[2]) Richard Francis Burton, Sindh and the Races that inhabit the valley of the Indus. London 1851.

դիպել է ծովով՝ եկածներին. մնացածները ծռած պիտի լինեն ճանապարհը դեպի հիւսիս-արևելք և հասած լինեն Ռուսիայի հիւսիսային պրովինցները և Սիբիրիան։ Սև ծովի մոտ իրար հանդիպելը մեկնում է բոշաների խիտ բնակութիւնը Բալկանեան թերակղզում, Ռումինիայում և Հայաստանում և մեկնում է մինչ մի յատնի աստիճան Պասպատի՝ի [1]) գիտողութիւնը, թէ ինչու Թիւրքիայի նահանգներում երկու տարբեր ախպերի բոշաներ են բնակւում։ Նոքա իրարից տարբերւում են թէ լեզուով և թէ բարքով և իրար սաստիկ ատելու զգացմունքով։ Դոցանից մէկերը բնակւում են քաղաքներում և Բոսֆորի և Արխիպելագոսի ափերում և հաստատաբնակ են. միւսները ըմբռնում են Ցապարի՝ի վայրենի ցեղերը և բնակւում են ներքին նահանգներում և լեռներում։

Մեծ մասը իսպանական Ջիտանոսների (բոշաների) և Ալժիրիայի բոշաները պէտք է պատկանում լինեն այն ճիւղին, որը ծովի ափով գաղթեց, թէև նոցա մի մասը միմիայն շատ լեռուց, 15-րդ դարի առաջին կիսում, դուքս Միհալի՝ի աւազակային խմբերի հետ Իսպանիա գաղթեց։ Մի վիպական ժամանակագրութիւն Կարլոս V-ի ժամանակներից, ուրեմն 16. դարու առաջին կիսից, ակնարկում է բոշաների Եւրոպա գաղթելը երկու ճանապարհով. մէկերը՝ Արաբիայի և Եգիպտոսի եզրներով, որով նոքա սարացինների զորքերի հետ իսպանական ափերը իջան, իսկ միւսները՝ ուղևորեցին տաճիկների մուտքը Ունգարիա և Բոհեմիա։ Բայց այս հաստատ է, որ, տաճիկների յարձակումներից առաջ, բոշաներ կային Բալկանեան թերակղզում։ Վկայութիւններ կան, որ բոշաները Յունաստանում դեռ ևս 14-երորդ դարում կային. և երևի նոքն այդ ժամանակ վալախների և Ալբանացիների՝ գաղթականութիւններին հետևելով՝ հաստատուեցին Թեսալիա, Եպիրոս, Նաուպլիա և Կորֆու կղզու վերայ, որպէս նաև Արխիպելագոսի կղզիների և Կիպրոս կղզու վերայ։ Նաև Իտալիա պէտք է բոշաները եկած լինեն 1422 թուականից առաջ, երբ դուքս Անդրաշ՝ի խմբերը Բոլոնիայում երևացին, որովհետև նոցա մէջ դեռ 1382 թուականին ծնուեց մի երևելի բոշա նկարիչ՝ Անտոնիո Սոլարի անունով։

III

Բոշաների ծագումը ըստ նոցա անթրոպոլոգիական-էթնոգրաֆիական նշանների։

Մինչ այժմ դեռ ոչ մի անթրոպոլոգ չի հաւաքել, քննել և դասաւորել այն նիւթերը, որ կան բոշաների ֆիզիքական, անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնայատկութիւնների մասին, որ կան անթրոպոլոգիական և էթնոգրաֆիական ընկերութիւնների և ճանապարհորդական հրատարակութիւնների մէջ։ Բայց այն մի քանի անթրոպոլոգիական և էթ-

նոգրաֆիական տեղեկութիւնները, որ կան այսօր բոշաների մասին, պրոֆեսոր Կորա-Տուրինի ասելով, հաստատում են այն ինչ գտել է համեմատական լեզուաբանութիւնը, այն է, որ բոշաները եկած են Հնդկաստանի Սինթ (Sindh) երկրից։ Բլումենբախի նկարագրութեան համեմատ, բոշաների արտաքինն է՝ կաշի աւելի կամ պակաս մութը գոյնը, ագռաւի սեռութեան մազերով և աչքերով, երեսը երկարաւուն է, ճակատը նեղ և վերը թուլող, քիթը փոքր ինչ առաջ ընկած և երբէք տափակ, աչքերի կոպերի մէջ տեղի տարածութիւնը նեղ. ունին սպիտակ ատամներ։ Ի. Կոպերնիկի համեմատեց 83 հնդկական գանգեր 15 բոշական գանգերի հետ և գտաւ շատ նմանութիւններ և շատ փոքր զանազանութիւններ։ Նորա դուրս բերած միջին թուերը բոշաների գանգի մեծութեան համար, 77,40 սանտիմետր է տղամարդկանց և 80 սանտիմետր կանանց համար։ Արել Հովելաք համեմատել է երկու տիպի բոշաներին, մէկը աւելի սուր գծագրութիւններով, միւսը աւելի կոպիտ բայց աւելի սիրուն գծերով և գտել է, որ այդ երկու տիպերն էլ գոյութիւն ունէին երբ նոքա Հնդկաստանից գաղթեցին։ Գանգաբանական հետազօտութիւնների ընդհանուր հետևանքը այս է, որ բոշաները գտանում են, գիտութեան մէջ ընդունած խօսքերով ասած՝ մեսատիկեֆալիայի և սուբդոլիխոկեֆալիայի սահմանի վերայ և լեպտորրին-ներ են։

Մարմնի մեծութեան չափումները ցոյց են տալիս, որ բոլով նոքա միջակ են, մարմնի անդամները կանոնաւոր, բայց շատ աչքի է ընկնում կանանց ստինքների ոչ սովորական մեծութիւնը։ Շատ քիչ են նոցա մէջ մեծ փորաւորներ, կզաւորներ, կոլրեր և այլ պակասութիւններ ունեցողներ։ Ոչ քամին և ոչ խոնաւութիւնը, կամ ցուրտը, որքան էլ լանկարծակի կերպով նոցա հանդիպելու լինի, ոչ մի վնաս չի հասցնում նրանց։ Թէպէտ և տաքութիւնը գերադասում են, բայց և ամենամեծ ցրտերին նոքա թափառում են բաց գլխով և միայն մի պատռտած շապիկով, ոչ ռեումատիզմից և ոչ այլ չարիքից վախենալով։

Նոցա մարմինը, որ ինքն ըստ ինքեան ուժեղ է և կոշտ, այսպէս ասած՝ վայրենի կրթութիւնով աւելի ևս պնդանում է։ Ցայտնի է թէ ինչպէս մի քանի ամսեկան երեխաներին շալակած տանում են նոցա մայրերը։ Երեք տարեկան երեխան արդէն կրկնում է ամեն խնամքից և ոտով ուղեկցում է հասակաւորներին։ Ամառուայ շոգերին երեխան շարունակ ենթարկւած է արևին, իսկ ձմեռը փակւած է ծխով լցցած խրճիթի մէջ։ Մայրերից մի քանիսը սովորութիւն ունին իրանց փոքրիկներին ճարպ քսել և լետոյ կրակի տաքութեան կամ արևին ենթարկել։ Արմատացած սովորութիւն է երես չը լւանալ։ Այս բոլորը, ասում է Պրեդարի, օգնում

---

[1]) Alex. Paspati, Etudes sur les Tschinghianés ou Bohémiens de l'Empire ottoman. Constantinople 1870.

է, որ բոշաները պահպանեն իրանց յատուկ դեղնաւուն-սեաւուն կաշէգոյնը։

Այս ամենը նմանապէս ցոյց են տալիս բոշաների հնդկական ծագումը, բայց դեռ ևս դրական ապացոյցներ չեն, թէ նոքա լեռագաներն են Զատ ազգի, որը երևի թէ նախաարիական բնիկներից ծագած մի ազգէ Հնդկաստանում։

IV

Բոշաների տարածելը Եւրոպայում։

Մենք արդէն մի քանի խօսք ասացինք բոշաների Եւրոպա տարածելու մասին և տեսանք, որ 15-երորդ դարից առաջ նոքա արդէն անցել էին Եւրոպա։ Նոցա տարածելը մանաւանդ Միջին-Եւրոպայում կատարուեց 1417-1418 թուականին։ Կոլոչի, հիմնուած հաստատ տեղեկութիւնների վերայ, գտնում է հետեւեալը։ Իրանց տարածելու ժամանակ Եւրոպայում, նոքա բաժանուած էին խմբերի («լաի») բաղկացած 70 մինչ 200 գլխից ամեն մէկը։ Իւրաքանչիւր խումբ ունէր իւր առաջնորդը («պոլգար»), իւր դատաւորը («ագիլ») և իւր պատուաւորները («ջամադարի»), որոնք, նայած իրանց կարևորութեան, կոչւում էին թագաւոր («պալօ») կամ իշխան («ռաջա»), իսկ Եւրոպայում կոչւում էին դուքս կամ կոմս։

Գլխաւոր խումբը, Սինդել թագաւորի, Միհալի, Անդրաշ և Պանուէլ դուքսերի, Իսն կոմսի և Պետրոն ասպետի առաջնորդութեամբ, երևաց Ունգարիայում և դիմեց դէպի Օֆեն քաղաքը։ Մի մասը նոցանից մնաց այդ երկրում Դանուբ և Թեյս գետերի ափերին։ Մնացածները բաժանուեցին երկու մասի, մէկը՝ դէպի արևմուտք, միւսը, դէպի հիւսիս ուղևորուելով, անցաւ Կարպատեան լեռները և հասաւ Բոհեմիա, Սաքսոնիա, Հանովեր և Մեկլենբուրգ և Բալթեան ծովը։ Այնպէս որ 20 տարուայ ընթացքում նոքա արդէն ցրուեցին Եւրոպայի մի մեծ մասում և մի դարուայ ընթացքում նոքա մտան նաև Շոտլանդիա, Դանեմարք, Շուեդիա, Լեհաստան և այլ տեղեր։ Կոլոչի քերում է այն թուականները, թէ երբ և որտեղից առաջին անգամ երևացին բոշաները Եւրոպայի այլ և այլ քաղաքներում։ Իսպանիայի մասին արդէն ասուեց, որ բոշաները այդտեղ դեռ 14-երորդ դարուց առաջ եկան։

V

Բոշաների հալածանքը և ազատումը։

Կոլոչի՛ի գրքի երրորդ և չորրորդ գլուխները այդ խնդրին են վերաբերում։

Միջին դարերում բոշաները լարգած էին, համապատասխան այդ էպոքի ոգուն, որը հրաշքների և կախարդութիւնների հաւատում էր։ Շատ

բնական է այդ պատճառով, որ բոյները գրաւելու ոչ ունէին։ Կախարդութեան արհեստի թափառող վաճառականներն էին նոքա այդ ժամանակ, ասում է Կոլոչի։ Շնորհիւ իրանց ծանօթութեան բժշկական խոտերի հետ, մի քանի աստղաբաչխական երևոյթների հետ, շնորհիւ այն ծանօթութեան, որ նոքա ունէին մետաղների խառնուրդների մասին, լետոյ խաղաթղթերի գործածութեան և Արևելքում սովորած թւերի գիտութեան մասին. լետոյ շնորհիւ գուշակութիւնների և ծանօթութեան հիպնոտիական երևոյթների հետ, նոքա աւելի ու աւելի ընդունելութիւն գտան և ահի վերայ հիմնուած պատի արժանացան։

Բայց երբ նոքա սկսեցին ճանաչուել որպէս խաբեբաներ, երբ մուրացկանը գող դառաւ, թափառականը՝ աւազակ, զամբիւղ չինողը՝ տուն կրակող, կախարդուհին դառաւ մեղքերի թողութիւն տուող, երբ վերջապէս նոքա սկսեցին իրանց մօտ ընդունել ամեն տեսակ չարագործներ և խաբեբաներ և այսպիսով ստեղծեցին մի ընդարձակ միութիւն չարագործների, որոնք հրապարակական խաղաղութիւնը խանգարում էին և սեպհականութեան սպառնացող դառան, այն ժամանակ Եւրոպայում, կրօնական և սոցիալական պատճառներով, նոցա դէմ մի ընդհանուր ատելութիւն բացուեց։ Ժողովրդական նախապաշարմունքը լարուեց նոցա դէմ, որպէս հրէաների դէմ։ Նոքա սկսեցին հալածուել և օրէնքից դուրս մարդիկ ճանաչուել. նոցա կապում էին խարոյկների վերայ, նոցանից խոստովանանք լսելու համար կատարուած չարագործութիւնների մասին և այլն։

Հալածանքների սկիզբը եղաւ Իսպանիայում, 1492 (նոյն այն տարին, երբ Ամերիկան գտնուեց). դորան չուտով հետևեցին Իտալիան, Ֆրանսիան, Ֆլանդրիան, Գերմանիան, Թուրքիան և Մոլդաւիան, Անգլիան և Շոտլանդիան, մինչդեռ Եւրոպայի այն մասերում, ուր այդքան խստասիրտ չէին դէպի նրանց, խիստ օրէնքներով նոցա զատապարտեցին երկիրը թողնելու։

Դորա հակառակ, բոյները Եւրոպայում մի երկրորդ հայրենիք գտան Ունգարիայում, ուր նոքա, շնորհիւ Սիդիսմունդ թագաւորի պաշտպանութեան, դեռ 15-րդ դարու սկզբում հաստատուեցին։ Այդտեղ նոքա պահպանեցին իրանց ազատութիւնը և բարիքներ վայելեցին, և սակաւ դէպքերում միայն դրդեցին իրանց դէմ տէրութեան և ժողովրդի խստութիւնները։ Մի այլ դիտառատութեան օրինակ ստացաւ Եւրոպան Ռուսիայից, ուր բոյների դէմ երբէք հալածանքներ չեն եղած, այլ կառավարչութիւնը աշխատած է նոցա տեղական բնիկների հետ խառնել և հաստատաբնակ դարձնել։ Գրեթէ ամբողջ Եւրոպան երեք դար շարունակ հալածեց բոյներին մտրակով, երկրից վռնտելով, կախաղաններով և խարոյկներով, որ նոցա ջնջի, բայց իզուր։ Եւ երկար ժամանակ տեսեց այս հալեցքը թէ նոքա սկի մարդիկ չեն, այլ վայրենի կենդանիք, որոնց դէմ մինչև անգամ որսորդութիւններ էին սարքում։

Բայց այդ բոլորով չը կարողացան նոցա ջնջել։ Հենց որ կատաղու-

թիւները անցնում էին, մէկ էլ տեսնէք բոշաները, դուրս գալով իրանց լեռնային ապաստարաններից, պարզ ցերեկ օրով ներկայացան քաղաքի և գիւղի փողոցներում, լիքը լոյսով և վստահութիւնով իրանց բաղդի վերայ։

Վերջապէս հասկացան, որ հալածանքով բան չի դառնալ, ապ որ մարդասիրութեամբ պէտք է վարուել նոցա հետ։ Դորա առաջին օրինակը տուեց Աւստրիայի Մարիամ Թերեզայի և իշխան Կաունիցի լուսաւոր կառավարութիւնը, որը իւր վերայ առաւ ոչ թէ հալածելը, այլ գործնական հաստատութիւններով նոցա կրթելը։ Ունգարիան շարունակեց իւր մեծահոդի վարմունքը դէպի բոշաները, թէև սոքա սկզբում չէին ուզում հպատակուել նոցա համար տուած օրէնքներին, օրինական կեանքը մի տեսակ ստրկութիւն համարելով։ Բայց և այնպէս նոքա սկսեցին սովորել հաստատաբնակութեան, թէ գիւղերում, թէ քաղաքներում, ուր նոքա սեպհական թաղեր ունեցան։ Աւելի հակւած դէպի արհեստները, քան դէպի հողագործութիւնը, նոքա շարունակեցին իրանց հին արհեստները՝ կաթսա շինող և ձիերի բժիշկ, երաժիշտ և պարող, արհեստաւոր և երգիչ։ Նոր իւրացրին նոքա մի քանի տեղերում ոսկի աւազ մաքրելը, որի համար նոքա առանձնաշնորհումներ ստացան։ Մի քանի տեղերում անդամ նոքա սովորեցին երկրագործութեան։ Կանայք, սովորելով աւելի կանոնաւոր կեանքի, տիպերի այնպիսի գեղեցկութեան հասան, որով Ունգարիան այժմ էլ հըռչակւած է։ 1782 թւականին, բացի հաստատաբնակներից, հաշուեցին դեռ 46.683 ուրիշ բոշաներ։

Աւստրիա-Ունգարիայի օրինակին հետևեց Իսպանիա, որ անցեալ դարի վերջերից սկսեց մտածել նոցա հաստատաբնակ դարձնել։ Բոշաները, տեսնելով տէրութեան ծառայողների կողմից սիրալիր վարմունք, ուրախութեամբ բնակութիւն էին հաստատում գիւղերում և ապրում էին օրէնքների համաձայն։ Ռուսիան, ուր բոշաները երբէք հալածւած չեն եղել, էներգիայով ձգտել է բոշաներին բարոյապէս բարձրացնելու։ 18-երորդ դարի վերջերից նոքա՝ Վոլգայի նահանգում և ամբողջ հարաւային Ռուսիայում բնակւելով, մնացին ազատ և անկախ և եթէ օրէնդրութիւնը նոցանով զբաղւել է, այդ եղած է նորա համար, որ նոցա օգտակար հպատակներ դարձնէ։

Մեծ-Բրիտանիայում անգլիական մարդասիրութիւնը բոշաների նկատմամբ արթնացաւ միայն ներկայ դարուս սկզբին, բայց նա հիմնւած էր մի քանի մարդասէրների անձնական գործունէութեան վերայ, որոնք 1827-ին Սութսամտոն'ում մի մարդասիրական ընկերութիւն հիմնեցին բոշաներին վարենութիւնից լետ սովորացնելու և նոցա բարոյապէս բարձրացնելու համար։ Շուտով նա իւր գործունէութիւնը ընդարձակեց և պատուական հետևանքներ ունեցաւ։

Բումինիայում երկար չարունակւեց բոշաների վատ վիճակը և անդամ օրէնքներով այդ վիճակը աւելի վատացաւ։ Մի քանի անձերի ձրգ-

տումներով միայն սկսուեց նոր ուղղութիւն նոցա համար և վալախիական կառավարութիւնը միջոցների դիմեց, որպէս Ալէքսանդր Գիկաս, որը 1837-ին 4000 բօշաների ազատութիւն տուեց, 1844 և 1855 թուականներին ամբողջ Վալախիայում վերացրեց բօշաների ստրկութիւնը, որին հետևեց և Մոլդաւիա։

Այսպիսով 1856 թուականին վերջապէս վերջացաւ ամբողջ Եւրոպայում բօշաների ճորտութեան կամ ստրկութեան արատը։ Արևմտեան Եւրոպայում այդ աղատումը բղխեց ֆրանսիական մեծ յեղափոխութեան սկզբունքների տարածուելուց։ Բայց մինչ այժմ էլ ստորութեան դրութիւնը մի տեսակ յատկացրած է բօշաներին և այժմ էլ Իտալիայում բօշայի անունը բաւական է համարւում գողի տեղ ընդունուելու համար։

VI

Բարոյական բնաւորութիւնը, ոգեկան ընդունակութիւնը, երաժշտութիւնը, բանաստեղծութիւնը և պարը։

Հանրածանօթ ունգարացի երաժշտագէտ և կոմպոնիստ Ֆրանց Լիստը նա է, որ ամենավարպետ կերպով նկարագրել է բօշաների բարոյական բնաւորութիւնը և նոցա արւեստագիտական և մանաւանդ երաժշտական ունակութիւնները։ Նորա հեղինակութիւնը այդ նկատմամբ ընդհանրապէս ընդունուած է [1])։

Ժամանակը և տեղական հանգամանքները, որոնք առհասարակ մեր աշխարհում այնքան դեր են խաղում, բօշաների վերայ կամ ոչինչ կամ շատ քիչ ներգործութիւն են արել։ Եւրոպայում երևալու օրից մինչ այսօր նոքա մնացել են, ինչ որ էին և որտեղ էլ նոցա պատահէք, Հիմալայի ստորոտներում մինչ Պարսկաստան, Լեհաստան և Ունգարիայ, Ալպերի ստորոտում և Ասորիքում, Բերբերիայում, Իսպանիայում թէ գուցէ և Բրազիլիայում, մենք նոցա ամենուրեք նոյնն ենք գտնում, կարծես նոքա իրարից հեռացած չը լինէին՝ ամենուրեք բաժանուած իրանց շրջապատող ազգերից, միշտ ձգտող, որ իրանց այս առանձնութիւնը խիստ պահպանեն և յետ քաշուող «գախնօ» ների և «բուզնօ»-ների հետ շփուելուց։ «Գախնօ» մի խօսք է, որ, Պասպատի'ի ասելով, ծնունդ է առել Տրապիզոնից և նշանակում է ոչինչ մարդ, կամ մի աննշան արժէքի մարդ։ Դա մի արհամարական խօսք է, որ բօշաները բանեցնում են օտարների համար։ «Բուզնօ» խօսքը ունգարական է և գործ է ածւում ունգարական և իսպանական բօշաներից։

---

[1]) Fr. Liszt, Des Bohémiens et de leur musique en Hongrie. Paris 1859. Թարգմանուած է նաև գերմաներէն 1861 և 1881 թուականներին։

Ինչ գրութեան մէջ էլ որ լինի նա, բոշան պահպանում է իւր սովորական և լարատև անզգայութիւնը, երբէք նա չի երևում ապագայի համար հոգ քաշող, միշտ ապրում է օր օրի վերայ անպայման մտաւոր անշարժութեան մէջ։ Կառավարչութիւն, օրէնքներ, կանոններ, սկզբունքներ, պատի զգացմունք՝ այս բոլորից ամենատարօրինակ աղդութեան անտանելի բաներ են։ Պարտականութիւն և սեպհականութիւն ասուած բաները նրանց անծանօթ բաներ են նոյնպէս։ «Պէտք է» խօսքը նոքա չունին, իսկ «ունենալ» բայը նոքա ունեցած են (terava), բայց զոնէ եւրոպական բոշաներից մոռացուած է։ Իւր սեպհական անձնաւորութիւնը, իւր «ես»-ը զգալ և այն էլ ամենախորը կերպով զգալ, այդ է, ասում է Կոլոչի, բոշայի ամենաներքին և ամենաբնատուր ձգտումը, կարօտը։ Այդ անսահման անկախութեան կարիքը, որը բոշաների բնաորոշ նշանն է դառել, նոքա ստանում են այն մի տեսակ մշտնջենական արբեցողութիւնից, որի մէջ դտնում են նոքա բնութեան հետ միշտ չփուելուց։ Որովհետև նոքա երբէք բնութեան անմիջական ներգործութիւնից չեն հեռանում, բնութիւնից նրանց ներշնչած ոգևորութիւնը այն աստիճան սովորութիւն է դառնում, որ նոքա այլ ևս չեն կարողանում ապրել առանց այդ լարատև զօրեղ զգացողութեան։ Նոքա աշխարհքումս չեն ճանաչում մի բան, որ հաւասարուէր այն հաճոյքներին, որ նոքա իրանց մարմնի բոլոր ծակոտիներով և զգացողութիւններով ներս են ծծում բնութեան գոգից։ Ամբողջ երկիրը նոցա համար հայրենիք է. միայն թէ իրանք իրանց ազատ զգան՝ ամեն կլիմա նոցա համար լարմար է։ «Ուր լաւ, անդ հայրենիք»—ահա թէ ում համար է ասած։

Թափառական կեանքը ոչ մի նոմադի համար այնքան անհրաժեշտ կարիք չի դառել որքան բոշաների համար։ Դորանից է և բնաւորութեան փոփոխութիւնները, անհանգիստ լուլուածութիւնը։

Չը նայած որ բոշան լռելեայն պաշտում է բնութիւնը, բայց Աստուծոյ, իբր տիեզերքը ղեկավարող, ոգու գաղափարը նրան անլայտ է։ Նորա ոգին երբէք չի կարողացել բարձր իդէալների հասնել։ Հանդերձեալ կեանքի գաղափարը նրան ծիծաղելի է երևում։ Նոքա կրօն չունին։ Նաև նոցա երգերի և պատմութիւնների մէջ, որոնցից ոմանք շատ հին են, հաւատի յետք անգամ չը կայ, չը նայած որ նոքա, իրանց անձնական օգտի համար, բայց առանց որ և է համոզմունքի, մի որ և է կրօնի պաշտամունք ընդունում են, մի փաստ, որ նկատուած է ամենուրեք, թէ քրիստոնէական և թէ մահմեդական աշխարհում։ Աստուածութիւնը նոցա համար այն է, ինչ իրանց օգուտ է և դուրեկան։ Այս է նկատուում, երբ նոցա դիտում էք, չը նայած որ Աստուած խօսքը նոքա ունին (Devel)։ Բայց այդ խօսքը, ծագած լինելով սանսկրիտական «Դեւա»-ից, ընդհանուր է բոլոր հնդկաեւրոպական ցեղերին։

Որպէս կրօն չունին, չունին նոքա նաև ոչ հայրենիք և ոչ իրանց

ազգի պատմութիւն։ Նոքա չունին ոչ մի գրաւոր արձանագրութիւն, անգամ չունին բերանացի աւանդութիւններ։ Այդ բոլորի տեղ նոքա ունին մի կիրք, որը նոցանում ամենաուժեղն է՝ մի բարձր հպարտութիւն իրանց սեպհական խղճութեան վերայ, որը կրթւած մարդու բոլոր ոյժերին ընդդիմադրում է։

Բայց այդ հասարակական ընտանիքից դուրս, այդ ժողովուրդը մի ունի անորոշ արւեստագիտական զգացմունք, որը արտայայտւում է նորա ազգային երաժշտութեան մէջ։ Այդ է, որ Ֆրանց Լիստը անուանեց sentiment bohémien (բոշայի զգացմունք) գեղարւեստի մէջ։ Ոգու այդ գիծը երեւում է իբր մի կարօտ դէպի անպայման ազատութիւնը միացած ձեւի անկախութեան հետ։ Երաժշտութեան մէջ, որպէս բոշաների բնաւորութեան մէջ, ամեն բան կարօտ և պահանջ է արտայայտում։ Բայց այդ բոշայի պահանջը աշխատաւոր մարդու, կամ մտածողի և հետազօտողի պահանջը չէ, այլ երեխայի անկարգ պահանջն է։ Բոշան յաւիտենական երեխայ է։

Բոշաների ոգեկան, մանաւանդ գեղարւեստական ունակութիւնների մասին վկայութիւն են տալիս այն զարմանալի առաջադիմութիւնները, որ նոքա միշտ անում են երաժշտութեան մէջ և այն բազմաթիւ գեղարւեստագէտները և երաժշտագէտները, որ նոցա միջից դուրս են եկել։ Թող յիշւեն միայն Սուչաւա, Բարրա, Բարնա Միհալի, Ցիհարի, Սուզոր, Բաչար, Սարկէօզի, Կեչկեմետի, Զինկա, յատուկ Պաննա՝ մի ջութակ ածող կին, որը Վիեննայում ամենափայլուն յաղթանակներ էր տանում, և ամենից առաջ Բիհարի (1769 մինչ 1827), որը ճանաչւեց որպէս ջութակիստների թագաւոր և փայլեց որպէս բոշական արւեստի, նոյնպէս և կլասիքական երաժշտութեան մէջ։ Վերջապէս թող յիշւի այստեղ երևելի նկարիչ Անտոնիօ Սոլարի, որը երևի մի վենետիկական բոշա էր (ծնւած 1382-ին), իսկ մտածողների մէջ՝ Ջօհն Բունիանս, որ մեծ ձիրքերով գրող և քարոզիչ էր, ծնւած 1628-ին և վախճանւած 1688 թ. Լոնդոնում [1])։

Բայց բոշան սիրում է իսկապէս միայն երաժշտութիւնը, որպէս Լիստն է ասում։ Եւ չը կայ թերևս մի այլ անկիրթ ազգ, որ ռիթմի այնքան ճշտութեամբ և էլեգանցով նւագել կարողանար, որպէս այդ յատուկ է բոշայական գործիքաւոր երաժշտութեան, որին այդ իսկ պատճառով Լիստը յատկացնում է մի իսկապէս ազգային դիւցազներգութեան նշանակութիւնը։ Նոցա գործիքների ախորժ հնչիւնը դեռ ևս գերազանցւած չէ, ածելու ոճը անհաւատալի է, և այն, ինչ ամենից շատ զարմացնում է,

---

[1]) Միստիքական գրող և հեղինակը իւր ժամանակ շատ կարդացւած և անթիւ անգամ նոր տպւած և թարգմանւած գրքի՝ «The pilgrims progress from this world to that which is to come». London 1678—84, երկու հատոր։

այդ՝ ունգարացի բոշաների օրքեստրն է, թէ պարի և թէ պատերազմական եղանակներում։

Նոցա երգերը, որ կարճ երգեր են և ռիտորնելներ, նոյն բարձրութեան վերայ չեն կանգնած։ Եւ որքան էլ մի քանի գրողներ գոված են բոշա երգչուհիներին, բայց նոքա,—Լիստի ասելով, չեն հասնում գործիքաւորներին. նոքա աւելի դիւթիչ են որպէս երևելի տարփաւորներ, քան որպէս լաւ գեղարւեստագէտներ։ Մոսկւայի բոշուհիները երգում են միայն որպէս դրդող և նախապատրաստող պարի համար, իսկական երաժշտութիւնը այդ պատճառով նոցա համար երկրորդական է։ Նա վերջանում է մի բաքոսական շրջապարով, որը զգացողական յուզմունքը հասցնում է գագաթնակէտի։

Բանաստեղծութիւնը, բոշաների մօտ, նմանապէս ծառայում է միայն որպէս պարի դաշնակցող։ Մանաւանդ իսպանական ջիտանոսները (բոշաներ) կուպլետները և ռիտորնէլները երգում են միայն պարի համար։ Հիւսիսում բոշան աւելի պատմիչ է։ Բոշայական բանաստեղծութեան մէջ, հակառակ տարածւած կարծիքի, շատ անգամ բարոյական և սիրային զգացմունք է յայտնւում։ Կոլոչին իւր գրքի մէջ այդպիսի օրինակներ է բերում։

Կայ մի տեսակ ժողովրդական բանաստեղծական բանաստեղծութիւն Իսպանիայում, որ կոչւում է poesia flamenca, կամ Cantos flamenca, մանաւանդ Անդալուզիայում։ Դա իսկապէս բոշայական չէ, բայց բոշայական ոգով ներշնչւած անդալուզական երգեր են, որոնցից պրոֆեսոր Մախադո ի Ալւարեզ Սեւիլլայում մի ժողովածու հրատարակեց [1])։

Ըստ Վայլանի (Vaillant), Արևելքի բոշաները ունին մի քանի պատկերացնող և սիմբոլական պարեր, որ նոքա կրօնական տօների առիթով ներկայացնում են, և նա դոցանից մէկը նկարագրում է, այն է Խաչի պարը, որը տեղի է ունենում ի պատիւ քրիստոնէական Զատկի։ Բայց բոլոր բոշայական տօներին, բոլոր «կակաւա»-ներում նոցա պարերը ամենևին կրօնական բնաւորութիւն չեն կրում։ Նոքա, որպէս ասւեց Մոսկւայի պարողուհիների մասին, զարթնացնում են իրանց պարով միայն զգայարանականը։ Թէ անցեալում և թէ ներկայումս բոշաների աղջիկները հռչակւած են որպէս պարողներ։ Եւ որպէս այդպիսիներ, նոքա դեռ 17 դարում Ֆրանսիայում շատ սիրւած էին։ Իսպանիայում նոքա պարում են «զարանդէօ» և «զորոնգօ», Արևելքում «րոմաիկա» կամ «տարանչա», որը նոյնն է թէ հնդկական բայադերների և եգիպտական ալմէների ու ղաւազիների պարը։

Լեզուի մասին յետոյ, բայց բոշաները ցոյց են տալիս ոգու մեծ սրութիւն և ոչ սովորական ճարպիկութիւն, միացած շատ կենդանի երևակայական ուժի հետ։ Ունգարական ուսումնարաններում ընդունւածներից մի

---

²) Colleccion de Cantos flamencos, recojidos y anotados per Demofilo. Sevilla 1881.

քանիսը մինչև անգամ ընդունակութիւն են ցոյց տւել աւելի բարձր ուսման համար։ Բայց ընդհանրապէս առած, հասունութեան նոքա չեն հասնում և միշտ ձգտում են դէպի իրանց նախկին կեանքը, իրանց խրճիթը։

VII

Լ ե զ ո ւ ն։

Բոշաների լեզուի մասին ամենազանազան կարծիքներ կային մինչ անցեալ դարի վերջերքը, չը նայած որ դեռ 1732 Թ.-ին Րիւդիգեր բոշայերէնը համեմատեց նոր հնդկական բարբառների հետ։ Մինչև անգամ մինչ մեր դարուս միջերքը հին կարծիքը իշխող էր, որ իբր թէ նոցա մէջ նմանութիւն չը կայ։ Երկար ժամանակ դեռ խնդիր կար, թէ արդեօք բոշաները մի որ և է լեզու ունի՞ն թէ ոչ, որովհետև շատերը ընդունում էին, որ բոշաները ոչ թէ իսկական լեզու, այլ մի գողական լեզու ունին, պայմանական լեզու, նման Իտալիայի լ ի ն գ ու է ց ե ր գ ա, գերմանական ռ ո տ վ ե լ շ, Ֆրանսիայոց լ ա ն գ վ ե ր տ լեզուներին։ Եւ կամ ընդունում էին, թէ նոցա լեզուն մի տեսակ կուտակումն է ուրիշ ազգերից վերցրած բառերի։

Բայց երբ կամաց կամաց դտան ազգակցութիւն բոշայերէնի և հնդկական լեզուի մէջ, որպէս ամենից առաջ Րիւդիգերը առաւ, և շնորհիւ նրան, որ անգլիացիք (1773-ին) և պորտուգալացիք (1778-ին) մտցրին հնդկական քերականութիւններ, պարզւեց, որ բոշայերէնը մի իսկական լեզու է, հիմնւած հնդկական բարբառների վերայ։ Գրելմանը 1782 Թ.-ին առաջինը կարգի բերաւ բոշայական քերականութեան և բառարանի տարրերը։ Մեր դարու առաջին քսան տարիներում նպաստեցին խնդրի առաջանալուն Րիխարդսոնի, Գրաբերգի Հեմզօ-ի, Իրւինի և Գուլմայերի ուսւածքները։ 1827-ին Բիշոֆ հրատարակեց մի բոշայերէն-գերմաներէն բառարան։ 1832-ին հռչակաւոր Մեցցոֆանտի գտաւ բոշայերէնի առանձին բնաւորութիւնը և կարևորութիւնը, 1837-ին Բորրով թարգմանեց Ղուկասի աւետարանը Զիտանոսների բարբառով, որից երկու տարի առաջ Գրաֆֆունդեր Էրֆուրտում հրատարակեց բոշայերէնի մի նախաշաւիղ, ուր նա հաստատեց, որ բոշայերէնը, թէև նա այլ և այլ ազգերից բառեր է փոխ վերցրել, բայց իւր քերականական կազմին և առանձին բնաւորութեանը հաւատարիմ է մնացել։ Հետևեալ տարիներում հրատարակւեց արդէն քանիցս յիշւած Պրեդարիի գիրքը. նաև սա պարունակում է մի համառօտութիւն և մի բառարան բոշայերէնի։ Դրան յաջորդեց Պոտտ'ի վերին աստիճանի հետաքրքրական աշխատասիրութիւնը [1]), որը ապացուցեց ազգակցութիւնը բոշայերէնի և զենդի։

---

[1]) Pott, Die Zigeuner in Europa und Asien. Halle 1844 bis 45.

Կոլոչի նկատում է, թէ որպէս շատ արդիւնաւէտ են եղել բոշայերէնի ուսումնասիրութեան համար 1850—1870 թուականները։ Այդ ժամանակամիջոցում ուսումնասիրեցին՝

Դիերկս և Բոդրիմոն—բասկերի բոշայերէնը.

Բորրով—իսպանական (Ցիտանոս) և անգլիական (Դիպռայս) և Ջիրենբուրգի բոշայերէնը։

Վալյան—ռումանական բոշայերէնը.

Բօհալինգ—ռուսական բոշայերինը,

Սմարտ—կրկին անգլիական բոշ.,

Կամպուցանօ—Խիմենից—իսպանականը,

Գոբինօ—պարսկական բոշայերէնը,

Բուգգե - գերմանական բոշայեր.

Նիւբոլդ—եգիպտական բոշայերէնը։

Միեւնոյն ժամանակ երևացին աւելի կատարեալ աշխատութիւններ, որպէս Ասկոլի—Հալլէյում, Միտրովիչ—Պրագում, Լիբիխ և Աւէ-Լալլեման-Լայպցիգում և Ֆրիդրիխ Միւլլեր՝ Վիեննայում։

1870 թուականից մինչ այժմ բոշայերէն բառագրականութիւնը ահագին յառաջադիմութիւններ է արել. Բորրով, Սմարտ և Կրոֆտոն տուին երկու շատ լաւ բառարաններ անգլիական բոշայերէնի (gipsy—dialect). Փւինզալէ տուեց մի բաւարար բառարան իսպանական բոշայերէնի. Պասպատի հրատարակեց Կ. Պոլսում իւր ուսումնքները չինգիանէ'ների մասին, որը մի առանձին արժէք ունի և Միկլովիչ Վիեննայում հրատարակեց իւր անհամեմատելի աշխատութիւնները։ Այդ միջոցին բոշաներին չարունակ ուսումնասիրեցին Ունգարիայում՝ Բորրով, Հոլանդիայում՝ Գօէյէ, Ռումանիայում՝ Կոնստանտինեսկու, Իսպանիայում Դիերկս, Սլովակիայում՝ Կալինա, Անգլիայում՝ Ջարլս Լելանդ, Ջիրենբուրգում՝ Շւիկեր, Անդրկովկասում՝ Պատկանեան։ Վերջապէս երևաց ունգարական բոշաների մասին Աւստրիա-Ունգարական արքիդուքս Յովսէփի աշխատութիւնը ունգարական բոշաների մասին և այժմ ահա Կոլոչիի աշխատութիւնը, որի մէջ կան յիշատակուած դեռ ուրիշ նիւթեր բոշայերէնի ուսումնասիրութեան մասին։ Մեր յիշատակածները—ամենագլխաւորներն են.

Բոշայական բարբառներից հին լեզուին ամենահաւատարիմ մնացած են Բալկանեան թերակղզունը, Իտալիայինը և Վալիսինը։ միւսները շատ աւելի են փոխ առած օտար բառեր, դարձւածներ և այլն, որպէս Իսպանիայում, Անգլիայում։

Ըստ Կոլոչի'ի Եւրոպայում հետազօտւած բոշայերէն բարբառները բաժանւում են 14 գլխաւոր տիպարների՝ 1) յունական-տաճկական բոշաներ կամ չինգիանէ, 2) ռումանական, 3) ունգարական, 4) սլաւոնիական, 5) գերմանական, 6) լեհական—լիտովական, 7) ռուսական, 8) ֆինական, 9) սկանդինաւական, 10) անգլօ-սաքսոնական կամ ջիպռայս (gipsies), 11)

վելշական, 12) իտալական, 13) բասկիական, 14) իսպանական բոշաներ կամ Ջիտանոս։ Բացի այդ եւրոպականներից, իւր բարբառներով ամենահարուստներից մէկ են է նաև Ասիական բոշաների լեզուն, որը մինչ այժմ քիչ է ուսումնասիրուած։ Աֆրիկայի և Ամերիկայի բոշաների բարբառները կամ քիչ կամ բոլորովին չեն ուսումնասիրուած։

Այդ բառբառների կազմելու մէջ անկասկած է, որ դեր են խաղացել նաև գաղտնի (գողերի) լեզուները։ Բայց չը նայած որ այդքան տարբեր տարրեր խառնուել են այդ բարբառների մէջ, նոցա կազմը միենոյնն է. իւր աղնուութիւնով, Ասկոլիի ասելով, նա դերազանցում է անգամ պալիական լեզուն։

—

VIII

Բոշաների թուահամարը

Վերջացնում ենք այս յօդուածը, մի կողմ թողնելով Կոլոչի'ի գրքի այն գլուխները, որ վերաբերում են բոշաների բարքին, սովորութիւններին, նիստ ու կացին, ապրուստին, զբաղմունքներին, նոցա արուեստներին, ամուսնութեան, թաղման սովորութիւններին և այլն, և մեր ընթերցողների առաջը դնելով Կոլոչի'ի հետեւեալ վիճակագրական ցուցակը բոշաների թուի մասին, Եւրոպայում, նախազգուշացնելով սակայն, որ այդ թուերը միայն մօտաւորապէս պէտք է ճիշտ ընդունել՝

Յունաստան	10.000
Թիւրքիա	67.000
Բուլգարիա	50.000
Բոսնիա-Հերցոգովինա	18.000
Սերբիա	34.000
Մոնտենեգրո	500
Ռումանիա	250.000
Աւստրիա-Ունգարիա՝	
Աւստրիա	16.000
Ունգարիա	150.000
Ռուսաց կայսրութիւն՝	
Ռուսիա	58.000
Լեհաստան	15.000
Շուեցիա և Նորուեգիա	1.500
Դանեմարք և Հոլանդիա	6.000
Գերմանիա	2.000
Իտալիա	32.000
Ֆրանսիա	2.000

Մեծ-Բրիտանիա	12.000
Իսպանիա	40.000
Մնացեալ Եւրոպան	15.000
	779.000

Նոյն աղբիւրից մենք իմանում ենք, որ առաջաւոր-Ասիայի նկատմամբ մօտաւորապէս յայտնի են հետեւեալ տեղերի համար բոշաների թիւ մասին՝

Անդրկովկաս	3.000
Ասիական Թուրքիա	67.000 [1])
Պարսկաստան (1866-ին).	13.000
Հնդկաստան, Սիբիրիա	20.000 (?)
Աֆրիկա, Ամերիկա, Աւստրալիա	166.000 (?)

Գուիդո-Տուրինի կարծիքով, սակայն, բոշաների թիւը պէտք է 2 միլիոնից շատ պակաս չը լինի։

Դ Սոցա մեծ մասը Փոքր-Ասիայումն են և Տաճկա-Հայաստանում։ Այդ թիւը աւելիս է Կոլոջի։